ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 , Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,www.escs.am

N---------- ---------- ----------2021թ.

08.1/21077-2021
23.09.21թ

«Քնար Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝
Պրն. Ի. Ավագյանին

Հարգելի պարոն Ավագյան.

Համաձայն նախարարության և Ձեր միջև 04.02.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/2-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.13-րդ կետի՝ Պայմանագրով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեին 29.06.2021թ կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/2-1-Հ1 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը՝ 19.07.2021թ, սակայն այն փաստացի իրականացվել է ժամկետի էական խախտումով (նշված ժամկետից 25 օրացուցային օր ուշացումով)՝ 13.08.2021թ: Բացի այդ, մատակարարված ապրանքները չեն համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված չափանիշներին, եղել են թերություններով, մասնավորապես. առկա է եղել աթոռների չափերի և լիցքի անհամապատասխանություն, ոչ կոկիկ աշխատանք, իսկ ցուցանակներից մի քանիսը քերծվածքներ են ունեցել, առկա են եղել անհարթություններ: Հարկ է նշել նաև, որ ապրանքների մատակարարման օրը Ձեր կողմից չի իրականացվել ապրանքների պատշաճ հանձնում՝ խախտելով կողմերի միջև կնքված Պայմանագրի 5.1 կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.1 ու 2.1.2 կետերով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի ա) և բ) պարբերությունները՝ միակողմանի լուծում է Ձեզ հետ 04.02.2021թ կնքված թիվ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-21/2-1 գնման պայմանագիրը:

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյան

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Подписано: GASPARYAN VAHRAM 3203740222

Կատ. ՀՀԿԳՄՄՆ գնումների վարչություն
Ա. Մարգարյան /հեռ. 010-59-96-66/